ՊԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 29/17

ք. Երևան "11" ապրիլի 2017թ.

"Հայաստանի ազգային պատկերասրահ" ՊՈԱԿ-ը, այսուհետ՝ Պահատու, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Արման Ծատուրյանի, մի կողմից, և

ՀՀ պետական պահպանության ծառայությունը, այսուհետ՝ Պահառու, ի դեմս «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա գործող ծառայության պետ Հ.Հարությունյանի, մյուս կողմից, հետագայում միասին հիշատակվելիս՝ "Կողմեր",

հիմք ընդունելով ՀՀ մշակույթի նախարարի 22.03.2017թ.-ի թիվ 126-Ա հրամանը

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պահատուն, ՀՀ պետական պահպանության ծառայության շենքի ներքին ձևավորման նպատակով, Պահառուի ժամանակավոր պահպանությանն է հանձնում իրեն ամրացված՝ 19 (տասնինը) թանգարանային առարկա (նկար), այսուհետ՝ Հավաքածու, համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 Հավելվածի և ընդունման-հանձնման ակտի, իսկ Պահառուն պարտավորվում է պահպանել Հավաքածուն պատշաճ վիճակում, սույն պայմանագրով սահմանված պայմաններին (ջերմախոնավային, հակահրդեհային անվտանգության, ինչպես նաև պահպանության այլ հատկանիշներին) համապատասխան, դրանց համար նախատեսված վայրում և պահպանված վիճակում վերադարձնել սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Սույն պայմանագրի գործողության ողջ ընթացքում պարբերաբար (յուրաքանչյուր ամիս) Հավաքածուն խնամելու համար վարձատրել Պահատուին:

II. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2. Պահատուն պարտավոր է՝

1) Հավաքածուն հանձնել Պահառուին՝ Հավաքածուում ներառված փորձաքննություն

անցած 19 թանգարանային առարկաների վերաբերյալ փորձագիտական եզրակացության տրամադրմանը հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում:

2) Պահառուին նախազգուշացնել պահատվության հանձնվող Հավաքածուի պահպանման առանձնահատկությունների (ջերմախոնավային, հակահրդեհային անվտանգության, երրորդ անձանց արտաքին շփման, ինչպես նաև այլ պահպանական հատկանիշների) մասին.

3) Հավաքածուի առկայության, պահպանվածության ստուգման (ուսումնասիրում), խնամքի համար (մաքրում, և այլն) տրամադրել համապատասխան մասնագետ.

4) սույն պայմանագրի 3-րդ գլխի 1-ին կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո հետ վերցնել ի պահ հանձնված Հավաքածուն.

5) Հավաքածուն ընդունելիս ստորագրել ընդունման-հանձնման ակտը, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ անմիջապես կազմել թերությունների ակտ:

6) Հավաքածուի Պահառուին հանձման օրը կնքել Հավաքածուի ապահովագրության պայմանագիր:

3. Պահատուն իրավունք ունի՝

1) պահանջել Պահառուից ձեռնարկել սույն պայմանագրով, ինչպես նաև այլ իրավական ակտերով նախատեսված միջոցները՝ Հավաքածուի պահպանվածությունն ապահովելու համար.

2) Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակման, ստուգել Պահառուի կողմից սույն պայմանագրի պահանջների պատշաճ կատարումը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինիս գործունեությանը.

3) Պահառուից պարբերաբար պահանջել և ստանալ տեղեկույթ սույն պայմանագրի պահանջների կատարման մասին.

4) Պահառուից պահանջել անհապաղ վերացնել նրա գործողությունների կամ անգործության հետևանքով առաջացած սույն պայմանագրի պահանջների խախտումները.

5) Միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Պահառուի կողմից սույն պայմանագրի պահանջների պարբերաբար (շարունակական) կամ եզակի խախտման դեպքում.

6) Իրացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4. Պահառուն պարտավոր է՝

1) Հավաքածուն պահատվության ընդունել քաղաք Երևան, Պոռշյան փողոց, 1-ին փակուղի, 20 հասցեում.

2) Հավաքածուի ցուցադրության վայրում ապահովել պահատվության հետևյալ պայմանները՝

- օդի ջերմաստիճանը +18-20 °C
- օդի հարաբերական խոնավությունը 50%
- լուսավորություն 70 լյուքս, վերծ արևի ուղիղ ճառագայթներից
- Հավաքածուն տեղակայել ջեռուցման մարտկոցներից և ջերմության այլ աղբյուրներից 3-ից 4 մետր հեռավորության վրա.
- Հավաքածուն չտեղակայել ջեռուցման մարտկոցների և ջերմության այլ աղբյուրների վերևում, ինչպես նաև միջանցիկ քամու առկայությամբ տարածքում.

3) պահատվության հանձնված Հավաքածուի պահպանվածության ապահովման համար ձեռնարկել սույն պայմանագրի, նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին, ինչպես նաև գործարար շրջանառության սովորույթներին, ներառյալ՝ պահատվության հանձնված Հավաքածուի հատկություններին համապատասխանող բոլոր միջոցները.

4) Հավաքածուի պահատվության ընդունման ժամանակ Պահատուի ներկայացուցչի ներկայությամբ իր հաշվին կատարել դրանց արտաքին զննումը.

5) վերադարձնել Պահատուի կողմից պահատվության հանձնված Հավաքածուն՝ ընդունման -հանձնման ակտի հիման վրա.

6) վերադարձնել Հավաքածուն այն վիճակում, որով նա ի պահ է ընդունել.

7) Պահատուին և նրա կողմից կցված մասնագետին հնարավորություն ընձեռնել հետևելու Հավաքածուի ֆիզիկական պահպանվածության վիճակին ամենամյա այցելությունների միջոցով.

8) իր ուժերով ապահովել Հավաքածուի ի պահ ընդունելու, այնպես էլ վերադարձնելու ժամանակ դրա տեղափոխումը.

9) առանց Պահատուի գրավոր համաձայնության Հավաքածուն չտրամադրել երրորդ անձանց.

10) Պահատուին վճարել սույն պայմանագրի 3-րդ գլխի 2-րդ կետով սահմանված վճարը.

11) Հավաքածուի պահպանման ընթացքում առաջացած թերությունները վերացնել իր միջոցների հաշվին՝ Պահատուի կողմից նշանակված մասնագետների միջոցով.

12) վճարել սույն պայմանագրի 4-րդ գլխի 10 կետով նախատեսված տույժն ու տուգանքները.

13) Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ Հավաքածուի ապահովագրության նպատակով, Պահատուին փոխհատուցել պայմանագրով նախատեսված ապահովագրության համար սահմանված գումարը:

5. Պահառուն իրավունք ունի՝

1) առանց Պահատուի համաձայնության Հավաքածուն ի պահ հանձնել երրորդ անձին, եթե նա ստիպված է դա կատարել հանգամանքների ուժով՝ Պահատուի շահերից ելնելով (արտակարգ իրավիճակներում Հավաքածուն պահպանելու նպատակով) և զրկված է նրա համաձայնությունն ստանալու հնարավորությունից.

2) Մինչև սույն պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Պահատուին տեղեկացնել սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման մասին և Հավաքածուն վերադարձնել վերջինիս:

III. Պայմանագրի ժամկետը և վճարման կարգը

1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 11-ը ներառյալ:

2.Պահառուն սույն պայմանագրով սահմանված կարգով Հավաքածուի խնամքի համար Պահատուին վճարելու է ամսեկան 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը: Հավաքածուի ապահովագրության նպատակով Պահառուն Պահատուին պետք է փոխհատուցի ամսական 7 000 (յոթ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

3. Նշված գումարը փոխանցվում է Պահատուի հաշվարկային հաշվին մինչև հաջորդ ամսվա 15-րդ (տասնհինգերորդ) աշխատանքային օրը, իսկ վերջին ամսվա գումարը՝ մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը:

IV. Այլ պայմաններ

1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է նյութական և ֆինանսական

պատասխանատվություն պատճառված վնասների և բաց թողնված օգուտների ամբողջ ծավալի չափով:

2. Մինչև Հավաքածուն Պահատուին վերադարձնելը առաջացած թերությունների համար Պահառուն վճարում է ապահովագրությամբ չփոխհատուցված վնասի գումարի չափով, ինչպես նաև սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարում է տույժ սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Հավաքածուի ապահովագրական արժեքների 1 %-ի չափով:

3. Սույն պայմանագրի չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա առաջացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (մեղքի բացակայություն), որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են համարվում՝ տարերային աղետների, արդյունաբերական և այլ վթարների, զանգվածային հասարակական անկարգությունների, պատերազմի կամ այլ նման պարագաների հետևանքներն ու դրանց վերացնելու դեպքերը, կամ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ընդունված և ուժի մեջ մտած ակտերը, եթե դրանք անմիջական կապված են սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների կատարման պատշաճության, ժամկետների կամ ծավալների հետ:

3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է անընդմեջ 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի սույն պայմանագրով սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին՝ այդ հիմքով որևէ տույժ կամ հատուցում չհաշվարկելով ու դրանց վճարման պահանջ չներկայացնելով:

4. Սույն պայմանագրում երկու Կողմերի գրավոր համաձայնությամբ կարող են կատարվել ցանկացած փոփոխություններ և լրացումներ՝ պետական լիազոր մարմնի գրավոր թույլտվության հիման վրա:

5. Սույն պայմանագիրը կնքելուց Կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում, կամ սահմանափակվում:

6. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը և Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Սույն պայմանագրի կատարման հետ կապված բոլոր տեսակի փաստաթղթերը, ծանուցումները, տեղեկատվությունը և հաղորդագրությունները Կողմերին պետք է հանձնվեն առ ձեռն, կամ ուղարկվեն պատվիրված նամակներով՝ փոստային ծանուցումով, սույն պայմա-

նագրում նշված հասցեներով: Ծանուցումների, նամակների և այլ փաստաթղթերի ներկայացման (ուղարկման, հանձնման) սույն պայմանագրով սահմանված ժամկետներ են համարվում հասցեատիրոջ կողմից դրանք փաստացի ստանալու (առ ձեռն հանձնելու) պահը, իսկ հասցեատիրոջ բացակայության, կամ նրանից անկախ որևէ այլ պատճառով փոստային ծառայության կողմից դրանք հետ վերադարձնելու դեպքում՝ նամակը (առաքանին) վերադարձնելու մասին կապի բաժանմունքի կողմից կատարված նշման օրը:

8. Սույն պայմանագրերի հավելվածները, հանձման-ընդունման ակտերը, փորձագիտական եզրակացությունը, ապահովագրության պայմանագիրը հանդիսանում են սույն պայմանագրերի անբաժանելի մասը:

9. Սույն պայմանագիրը կազմված է 4 հավասարազոր օրինակներից (յուրաքանչյուրը բաղկացած է 6 թերթից), որոնցից երկու օրինակը հանձնվում են Պահառուին, իսկ երկու օրինակը՝ Պահատուին:

Տեղեկություններ Կողմերի մասին

Պահատու՝ "Հայաստանի ազգային պատկերասրահ" պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ 02506317, հասցեն՝ քաղաք Երևան, Արամի 1, հաշվարկային հաշիվ N 160481001214, ՎՏԲ-Հայաստան բանկ, Գլխավոր գրասենյակ, հեռ.՝580812, 582161:

Պահառու՝ ՀՀ պետական պահպանության ծառայություն, ՀՎՀՀ 00006796, թիվ 1 գանձապետական բաժանմունք, Հ/Հ 900011302016, հասցե՝ ք. Երևան, Պռոշյան փող., 1-ին փակ. 20, հեռ. 530521/ 530142

Պահատու

Արման Ծատուրյան

Պահառու

Հ.Հարությունյան

11 ապրիլի 2017թ. կնքված
թիվ 29/17 պահատվության պայմանագրի

Հավելված 1

ՑՈՒՑԱԿ

ՀԱՊ-ի կողմից ՀՀ պետական պահպանության ծառայությանը ժամանակավոր պահպանության հանձնված թանգարանային առարկաների

1.	ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ , 1921թ.	«Հնձված արտեր», 1981թ	կտ. յուղ. 64,5*93,5սմ	ժ-6172/16213	1.400000դր
2.	ՄԽԻԹԱՐՅԱՆ ՂԵՂԱՆԻԿ , 1908-1998	«Սևանը Այրիվանքից», 1956թ	կտ. յուղ. 47,4*80սմ	ժ-6193/16237	875 000դր
3.	ՄԽԻԹԱՐՅԱՆ ՂԵՂԱՆԻԿ , 1908-1998	«Արագածը Քուչակի դաշտերից», 1958թ	կտ. յուղ. 72,5*116սմ	ԱԿՖ-2666	1.100000դր
4.	ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ , 1910-1998	«Արաքս գետի հովտում», 1959թ	կտ. յուղ. 70*87սմ	ժ-4673/11569	1.500000դր
5.	ԿՈԶՈՅԱՆ ԼԵՎՈՆ , 1921	«Ծաղկած ծիրանենի», 1972թ	կտ. յուղ. 80*87սմ	ժ-6677/17364	900 000դր
6.	ՔԱԵԲԵՄԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ ,	«Կեչարիսի եկեղեցին», 1973թ	կտ. յուղ. 85*100սմ	ժ-8358/23140	875 000դր
7.	ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, 1931	«Ամպոտ եղանակ», 1982թ	կտ. յուղ. 72,8*92սմ	ժ -6180/16221,	1.100000դր
8.	ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԵՂԻՆԵ , 1912	«Յասաման»,	կտ. յուղ. 77*63սմ	ԱԿՖ-2986	1.100000դր
9.	ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱՀԱՏ , 1898-1966	«Գյուղական բնանկար», 1940թ	կտ. յուղ. 60*75սմ,	ժ-5466/14040	875 000դր
10.	ԳՅՈՒՐՋՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, 1928-2000	«Աշնանային բնանկար», 1979թ	կտ. յուղ. 75*99,5սմ	ժ-5886/15509	1.750 000դր

11.	ԳՅՈՒՐՋՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, 1928-2000	«Ուշ աշուն», 1977թ	ստվ. յուղ. 100*150սմ	Ժ-7683/21104	2.000 000դր
12.	ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՊԵՏՐՈՍ, 1912-1995	«Արենի գյուղը»,1956թ	կտ. յուղ. 69*83,5սմ,	Ժ-4977/12644	1.225 000դր
13.	ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ , 1904-1983	«Սևան», 1938թ	կտ. յուղ. 66*75,5սմ	Ժ-6099/16039	1.100000դր
14	ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ , 1904-1983	«Գարունը Գողթի լեռներում», 1960թ	կտ. յուղ. 70*100սմ,	Ժ-4680/11576	1.230 000դր
15.	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ , 1952թ.	«Խաղաղ անկյուն», 1984թ	կտ. յուղ. 68*95սմ	Ժ-6203/16270	875 000դր
16.	ԳԱԶԱՋՅԱՆ ԼԵՎՈՆ, 1890-?,	«Սարի թաղ», 1957թ	. կտ.յուղ. 90,5*12*,5սմ	ԱՎՖ-2424,	1.000 000դր
17.	ԵՍԱՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ, 1909-1977	«Արգնի. Պուրակ»,	կտ. յուղ. 62*74սմ	Ժ-5785/15275	2.500 000դր
18.	ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ ՓԱՆՈՍ, 1865-1941	«Ձորագեղ», 1930թ	կտ.յուղ. 80*100սմ	Ժ-2192/3147,	8.000 000դր
19.	ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ, 1918-1991	«Նատյուրմորտ. Փշեր», 1968թ	կտ. յուղ. 69*97սմ	Ժ-5326/13613	1.100000դր

Պահառու՝

Արման Ծատուրյան

կ.տ.

Պահառու՝

Հ.Հարությունյան

կ.տ.